ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2026թ. **N-----Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԿՈՍՏԱՆ ԶԱՐՅԱՆԻ ԴԻՄԱՔԱՆԴԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» հ. 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն հայ անվանի գրող ու մտավորական Կոստան Զարյանի 140-ամյակի առթիվ դիմաքանդակի տեղադրմանը Երևան քաղաքի Աբովյան փողոցի և Սայաթ -Նովայի պողոտայի հատման մասում՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2026 թվականի ---------- ---ի
N--- Ա որոշման



ՏԵՂԱԴԻՐՔԸ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ

Աբովյան և Սայաթ-Նովա փողոցների խաչմերուկում

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Հուշարձանը զրոյի թողած զրական ահռելի ժառանգության նկարագիրն է, զուտ քանդակային ձևամտածողությամբ: Հայրենի հողից վեր խոյացող գրքերը և գրքերի վրա հանգչող գլուխը և ձեռքերը՝ զրոյի կյանքի և ստեղծագործության ավինքսանման արտահայտությունն է: Գրքերի քայքայված վիճակը, բայց հաստատուն ասոցիացնական դաստավորվածությունը, նրա հայրենիքում նրած տարիներին մերժվածության իդեան է: Մեծն զրոյի գլուխը իր ահռելի խորությամբ և արտահայտչականությամբ շեշտում է նրա անչափելիությունը: Ձեռքերը հորիզոնական դիրքով նրանց արարչական վիճակն են արտահայտում:

Ճարտարապետական լուծումը ճշգրիտ և ներդաշնակ է քանդակի հղդաքմանը:

Բրոնզը կատարյալ նյութ է հուշարձանի համար:

ԿՈՍՏԱՆ ԶԱՐՅԱՆԻ ՀՈՒՇԱՐՁԱՆ



ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾ՝ ՄԿՐՏԻՉ ՄԱՋՄԱՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԿՈՍՏԱՆ ԶԱՐՅԱՆԻ ԴԻՄԱՔԱՆԴԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայ գրող, բանաստեղծ, արձակագիր, արվեստաբան, գրականագետ, ԽՍՀՄ գրողների միության անդամ Կոստան Զարյանը ծնվել է 1885 թվականի փետրվարի 2-ին Շամախի քաղաքում: 1890 թվականին՝ հոր մահվանից հետո, Եղիազարյանների ընտանիքը տեղափոխվել է Բաքու, որտեղ Կոստանն ընդունվել է ռուսական գիմնազիա: Այնուհետև ավագ եղբայրը նրան տարել է Փարիզ, տեղավորել Սեն-Ժերմեն քոլեջում, որն ավարտելուց որոշ ժամանակ ապրել է Կովկասում և մեկնել Բելգիա՝ ուսումը շարունակելու նպատակով: Բելգիայում ստացել է փիլիսոփայության դոկտորի աստիճան: 1910-1913 թվականներին Զարյանն ապրել է Վենետիկում, որտեղ էլ Մխիթարյան միաբանների մոտ սովորել է հայերեն:

Առաջին գիրքը՝ «Երեք երգերը» գրվել է իտալերեն (նույնը հայերեն լեզվով լույս է տեսել 1931 թվականին): 1914 թվականին, երբ Պոլսում Հեթանոսական շարժմանն էին ներգրավված հայտնի մտավորականներ, Պոլսում Կոստան Զարյանը Դանիել Վարուժանի, Հակոբ Օշականի, Գեղամ Բարսեղյանի և Ահարոն Տատուրյանի հետ միասին հիմնել է «Մեհեան» հանդեսը, որը լույս է տեսել 7 համարով՝ 1914 հունվարից մինչև հուլիս: 1922 թվականին Պոլսում լույս է տեսել Զարյանի հայերեն լեզվով առաջին գիրքը՝ «Օրերի պսակը», իսկ աշնանը Զարյանն ընտանիքով հաստատվել է Երևանում: 1922-1924 թվականներին համեմատական գրականության պատմություն է դասավանդել Երևանի պետական համալսարանում: Սակայն 1924 թվականին կրկին մեկնել է Եվրոպա:

1925 թվականին Փարիզում հիմնել և խմբագրել է արվեստի, գրականության և փիլիսոփայության «Բաբելոնի աշտարակ» ամսագիրը (ֆրանսերեն): Ապա մեկնել է Իտալիա: Բոստոնի «Հայրենիք» ամսագրում լույս են տեսել նրա «Անցորդը և իր ճամփան» (1926-1928), «Բանկոոպը և մամութի ոսկորները» (1931-1933), «Երկիրներ և Աստվածներ» (1935-1938), «Կղզին և մի մարդ» (1955 թվական) գործերը: 1944-1946 թվականներին հայագիտություն է դասավանդել Նյու Յորքի Կոլումբիա համալսարանում: 1946 թվականին Նյու Յորքում հիմնել և խմբագրել է «Հայկական քառամսյակ» անգլերեն հանդեսը: 1952-1954 թվականներին արվեստի պատմություն է դասավանդել Բեյրութի ամերիկյան համալսարանում: 1961 թվականին ներգաղթել է Հայաստան:

Կոստան Զարյանը վախճանվել է 1969թ. դեկտեմբերի 11-ին Երևանում:

Կոստան Զարյանի 140-ամյակին նվիրված դիմաքանդակի տեղադրման ծախսերը իրականացվելու է «Կողբ» կրթության, մշակույթի և սպորտի զարգացման հիմնադրամի միջոցներով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ